ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 20 մայիսի 2025թ.

Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստից

Նիստի մասնակիցներ.

Հանձնաժողովի նախագահ՝

Կարապետյան Լիլիա՝ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի անդամներ՝

Սարգսյան Հեղինե ՝ հանձնաժողովի քարտուղար,

Ծերունյան Բյուրեղ՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

Հանիսյան Էմմա ՝ «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ, հանձնաժողովի անդամ,

Արեգա Բաղդասարյան՝ «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

Նալբանդյան Մանուշակ ՝ «Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի անդամ:

Հրավիրված անձինք՝

Թորոսյան Տիգրան՝ «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,

Շահրամանյան Աստղիկ՝ «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տեղամասային թերապևտ,

Բուդաղյան Ռուզաննա՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի աշխատակից,

Հովհաննիսյան Արմեն՝ «Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ -ի տնօրենի տեղակալ,

Հակոբյան Հակոբ՝ «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տեղամասային թերապևտ,

Ստեփանյան Լուսինե՝ «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ֆթիզիատոր,

Մարգարյան Արմինե՝ «Վայոց ձորի ԲԿ» ՓԲԸ-ի վարակաբան,

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Արտաընդերային վիրուսային հեպատիտների 2024 թվականի համաճարակային իրավիճակը՝ առկա խնդիրները վեր հանել և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել:

/զեկուցող՝ Բ.Ծերունյան/

2. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:

3. Հանձնաժողովի նիստի ամփոփում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովի նիստը ղեկավարեց Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Լ.Կարապետյանը և ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

Արտահայտվեցին՝

ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը ներկայացրեց արտաընդերային վիրուսային հեպատիտների 2024 թվականի Հայաստանի Հանրապետությունում համաճարակային իրավիճակը: Նիստի ընթացքում ընդգծվեց, որ վիրուսային հեպատիտներն առողջապահության գերակա խնդիր են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ:

Նշվեց, որ Հանրապետությունում 2024 թվականի ընթացքում արձանագրվել է արտաընդերային վիրուսային հեպատիտների 2348 դեպք, հեպատիտ Բ (սուր, քրոնիկ, ՀԲմ հակածնակիր)՝ 877, հեպատիտ Ց (սուր, քրոնիկ, հակա-ՀՑՎ-ակիր)՝ 1464, այլ (չճշտված, համակցված հեպատիտներ)՝ 7: Արձանագրված 877 հեպատիտ Բ-ից՝ սուր հեպատիտ Բ՝ 12-ը, առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Բ՝ 33-ը, ՀԲմ հակածնակիր՝ 832-ը: Արձանագրված 1464 հեպատիտ Ց-ից՝ սուր հեպատիտ Ց՝ 10-ը, առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Ց՝ 48-ը, հակաՀՑՎ-ակիր՝ 1406-ը:

2024 թվականին՝ նախորդ տարվա համեմատ հեպատիտների հիվանդացության ցուցանիշը Երևան քաղաքում նվազել է 1,1 անգամ, իսկ մարզերում՝ աճել 1,2 անգամ: 2024 թ-ին արձանագրված վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշը Երևան քաղաքում 1,4 անգամ գերազանցում է մարզերի համեմատությամբ:

2024 թվականի ընթացքում վիրուսային հեպատիտների գրեթե բոլոր տեսակների հիվանդացության ցուցանիշները բարձր են տղամարդկանց շրջանում (2-2,3 անգամ) (բացառությամբ սուր հեպատիտ Բ-ի՝ կանանց շրջանում բարձր է 1,4 անգամ):

2024 թվականին ՀՀ-ում արձանագրված 22 սուր վիրուսային հեպատիտների հավանական պատճառներն են. 3-ինը՝ բժշկական միջամտություն, 4-ինը՝ ատամնաբուժական, 1-ինը՝

մատնահարդարում, 3-ինը՝ թմրամիջոցի գործածում, մնացած 11 դեպքի առաջացման պատճառն անհայտ է:

ՀՀ-ում 2024 թվականին մինչև 18 տարեկան անձանց շրջանում արձանագրվել է վիրուսային հեպատիտի 5 դեպք (չճշտված հեպատիտի 2 (որից 1-ը 3-6 տարեկան), քրոնիկ հեպատիտ Բ-ի 2, HBS Ag+ 1 դեպք):

Վայոց ձորի մարզում 2023թ.-ի համեմատ գրանցվել է հեպատիտների աճ ՝ 2024 թ.-ին գրանցվել է հեպատիտ Բ-ի 16 դեպք, որից մեկը եղել է առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Բ, մնացած 15-ը եղել են ՀԲմ հակածնակիր, սուր դեպքեր չեն գրանցվել: Նշված դեպքերը հայտնաբերվել են պատահաբար՝ բժշկական հետազոտությունների հետևանքով: Վայոց ձորի մարզում գրանցվել է հեպատիտ Ց-ի 18 դեպք, որոնց մեջ սուր և քոնիկ դեպքեր չեն եղել: 2025թ.–ին հիմնականում հեպատիտների դրական դեպքերը հայտնաբերվել են Վայոց ձորի ԲԿ-ում՝ բժշկական միջամտություններից առաջ իրականացվող հետազոտությունների արդյունքում:

Նշվեց նաև, որ հեպատիտներով վարակվելու առավել բարենպաստ պայմանները գեղեցկության սրահներն են՝ իրականացվող տարբեր միջամտությունների պատճառով, որոնց վերահսկողությունն, ի տարբերություն պետական բժշկական կազմակերպությունների, բավարար չի իրականացվում:

Ներկայացվեց հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումների ընթացակարգը և դրա անհրաժեշտությունը:

Քննարկվող հարցերի շուրջ արտահայտվեցին «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Ա. Բաղդասարյանը և տեղամասային թերապևտ Հ. Հակոբյանը, Վայոց ձորի ԲԿ-ի վարակաբան Ա. Մարգարյանը:

Քննարկվեցին մարզում հեպատիտների հայտնաբերման և ախտորոշման, համաճարակաբանական հսկողության և կանխարգելման ոլորտներում առկա խնդիրները:

Քննարկման արդյունքում նիստը որոշեց.

1. Կարճ ժամկետում վերացնել բժշկական կազմակերպություններում առկա թերությունները և բացթողումները:
2. Շարունակել ակտիվ աշխատել ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մարզային մասնաճյուղի հետ:

3. Հանձնարարել բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ շարունակել ցուցաբերել անհրաժեշտ վերաբերմունք ներհիվանդանոցային միջամտություններով պայմանավորված, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման նկատմամբ:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սարգսյան